1. Էկո համակարգի վերականգնում

- Համատարած ծառատունկ
- Բուսաբանական այգու հիմնովին վերանորոգում և վերականգնում, ժամանակակից եւ կենսաբազմազանությամբ հագեցած միջավայրի ապահովում: Արդյունքում՝ ժամանակակից ու ինքնատիպ բուսաբանական այգի
- Հանրային վայրերում ժամանակակից բիո զուգարանների տեղադրում, (ամեն թաղամասում մի քանի տեղ առնվազն, հատկապես կանգառներին մոտ)
- Շենքերի բակերի և հարակից տարածքների կանաչապատում՝ գազոնային հատվածի ավելացում
- Շինարարական փոշու դեմ պայքար՝ցանկապատում, ցանցապատում, շինհրապարակը լքելուց առաջ շինտեխնիկայի լվացում
- Գետերի հիմնովին և պարբերաբար մաքրման համար ժամանակակից տեխնիկաների ձեռքբերում
- Ստորգետնյա ջրահեռացնող համակարգի պարբերաբար մաքրում՝ հորդառատ անձրևների ժամանակ հեղեղներից խուսափելու նպատակով
- Թափառող կենդանիների համար կացարանների կառուցում և համապատասխան խնամքի և հիգիենայի ապահովում
- Երևան քաղաքի կանաչ գոտու ավելացում
- Կասկադի վերին հատվածի աշխատանքների ավարտ

2. Շենքեր և շինարարարություն

- Բակերի բարեկարգում, երեխաների համար խաղահրապարակների կառուցում
- Խաղահրապարակների կառուցումը և բակերի բարեկարգման աշխատանքները կիրականացվեն առանց բնակիչների անդորրը խանգարելու
- Բազմաբնակարան շենքերում վերելակների հարցի վերջնական լուծում
- Շենքերի տանիքներին արևային էներգիայի համակարգերի տեղադրում (որը կապահովի բնակիչներին շատ էժան, կամ անվճար էլեկտրաէներգիայով, ավելցուկը կվաճառվի, ինչի արդյունքում կվերանա կախվածությունը էլեկտրոցանցերից)
- Շենքերի շքամուտքերի վերանորոգում
- Համատիրությունների արդիականացման ժամանակակից մեխանիզմի և տոտալ վերահսկման համակարգի ներդրում
- Շենքերի կամ համատիրությունների լիազորված անձանցից հանձնաժողովի ստեղծում, պարբերական քննարկումներ, առաջնահերթությունների ու թերացումների լուսաբանում
- Պարբերական և շարունակական հանդիպումներ բնակիչների հետ

3. Տրանսպորտ

- Ավտոպարկի թարմացում, արգելք հին և անսարք տրանսպորտային միջոցների շահագործմանը, խիստ վերահսկողություն մասնավոր տրանսպորտային երթուղիների նկատմամբ
- Կանգառների բարեկարգում, լուսավորում
- Տրանսպորտի ուղևորատոմսերի համակարգի ներդրում
- Քաղաքում երթուղիները ցուցադրող վահանակների գործարկում (չվացուցակների օնլայն հետևելու մեխանիզմի գործարկում)

- Քաղաքավարության, տեղ զիջելու և տարրական կուլտուրայի մասին հիշեցնող աուդիո կամ վիդեո հոլովակների պարտադիր ներկայացում քաղաքային տրանսպորտում
- Լուրջ վերահսկում տրանսպորտում հնչող երաժշտությանը, ընդհուպ մինչև հատուկ ցանկի մշակում և տրամադրում:
- Անցում էլեկտրական տրանսպորտի՝ տրամվայների վերականգնում, տրոլեյբուսների պարկի թարմացում, ավելացում և այլն
- Ավտոկայանատեղիների (parking) ավելացում, նոր տեխնոլոգիաների կիրառում, վերգետնյա շարժական կայանատեղիների ավելացում
- Հեծանիվների և սկուտերների համար առանձին գծերի ավելացում
- Կարմիր գծերի և ապօրինի վճարովի կայանատեղիների վերացում
- Թույլատրելի վճարովի կայանատեղիների ժամավճարների գնի վերանայում և վերահսկում
- Տաքսիների գների ֆիքսում և վերահսկողություն
- Հաշմանդամների և տաքսիների համար անվճար ավտոկայանատեղիների հատկացում
- Գերծանրաբեռնված փողոցների ձևափոխում բազմահարկ համակարգով
- Փողոցների և մայթերի վերանորոգում և կահավորում, գծանշումների և գիշերային լուսավորության ապահովում արևային համակարգերի միջոցով

4. Աղբահանություն

- Աղբահանության աշխատանքների համակարգային լուծում, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում և միջազգային նորմերին համապատասխան կոնկրետ ստանդարտների մշակում և հայկական նորարարական գաղափարների մոդելների գործարկում
- Նուբարաշենում աղբի վերամշակման գործարանի ստեղծում (նվազագույնը 200 աշխատատեղ՝ աշխատավարձը սկսած 300.000 դր-ից)
- Սոց. փաթեթների տրամադրում աղբահանության սեգմենտի աշխատակիցներին
- Խստագույն տուգանք հասարակական վայրերում աղբի նետման, ինչպես նաև ոչ թույլատրելի վայրերում աղբի կուտակման համար
- Աղբամանների տեղակայման կետերի վերանայում և աղբահանության գործընթացի հաճախականության ավելացում

5. Կրթություն և մշակույթ

- Պատմամշակութային հաստատությունների ինվենտարիզացիա և գույքի վերահսկում (տեսչական գործունեության հատուկ չափանիշների սահմանում)
- Մշակութային հաստատությունների վիճակի բարելավում
- Թանգարաններում ցուցադրությունների համար նորագույն տեխնոլոգիաների ներդրում և կիրառում
- Ակտիվ երկխոսություն և համագործակցություն տարբեր երկրների կրթական և մշակութային ոլորտներում (գրականության տարածում, կինոինդուստրիայի ակտիվացում, փառատոներ և այլն)
- Ներդրումային ծրագրերի ակտիվացում հատկապես սփյուռքից, ինչպես նաև փորձի փոխանակում ոչ միայն Հայաստանի տարբեր մարզերից, այլ նաև սփյուռքից,
- Մշակութային միջոցառումների մասին իրազեկում հեռախոսային հավելվածների կիրառմամբ
- Աշակերտների համար պարտադիր այցելություն մշակույթային օջախներ /պետական միջոցներով/

- Դպրոցներում մարզադահլիճների վերանորոգում և տեխնիկական վերազինում /պետական միջոցներով/
- Սպորտային մարզաձևերի ավելացում և աշակերտների պարտադիր հաճախում
- Մարզիչների աշխատավարձերի բարձրացում
- Դպրոցներում համազգեստային համակարգի գործարկում
- Անվճար դասագրքերի տրամադրում պետական միջոցներով՝ տուգանք միայն վնասելու դեպքում
- Դպրոցների բարեկարգման համար հանգանակությունների բացառում, բացահայտվելու դեպքում խստագույն պատժամիջոցների կիրառում
- Խրախուսական մրցույթներ դպրոցականների շրջանակում՝ հատուկ քաղաքապետարանի մեդալ, կամ պատվոգիր
- Մանկապարտեզների քանակի ավելացում ժամանակակից չափանիշներին և որակներին համապատասխան
- Դպրոցներում դասապատրաստման համակարգի լիարժեք ներդրում /պետական միջոցներով/
- Անապահով ընտանիքի երեխաներին առանձնահատուկ մոտեցում, անվճար գրենական պիտույքների և այլնի տրամադրում
- Պարբերաբար այցելություն անապահով ընտանիքներ

6. Սոցիալական ծրագրեր

- Անօթևանների համար գիշերակացով ապաստանների տրամադրում
- Ծերանոցների և մանկատների կենսական պայմանների բարելավում
- Վերահսկողական մարմնի ստեղծում , ամիսը երկու անգամ այցելություն ծերանոցներ և մանկատներ
- Սոցիալական ծրագրերի մշակում և ներդրում հաշմանդամների, ծերերի, բազմազավակ ընտանիքների և սոցիալապես խոցելի խավերի համար
- Տրանսպորտից անվճար օգտվելու հնարավորություն 1 և 2 կարգի հաշմանդամներին, բազմազավակ ընտանիքներին, միայնակ մայրերին, պատերազմի մասնակիցներին
- Սոցիալական ծրագրերի շահառուներին՝ պատերազմի ընթացքում հաշմանդամություն ստացած զինվորականներին և սոցիալապես խոցելի խավերին բնակարանների տրամադրում՝ ըստ ընտանիքի անդամների քանակի

7. Առողջապահություն

- Առողջապահական հիմնարկների վերանորոգում, խիստ արդիականացում
- Անձնակազմի պարտադիր և պարբերաբար վերապատրաստում
- Պետության կողմից ֆինանսավորվող արտերկրյա վերապատրաստումներ բժիշկների համար
- 1-03, 1-04 ավտոպարկի թարմացում՝ միջազգային չափանիշներին համպատասխան կահավորում
- Անվճար բուժօգնության համակարգի և շահառուների վերանայում
- Առավելություն պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքի անդամներին

8. Թույլտվությունների տրամադրում և պետական գույքի վերահսկում

- Գետնանցումների ողջամիտ շահագործում

- Թույլտվությունների դիմումային համակարգի դյուրացում
- Գնումների թափանցիկություն
- Գույքահարկի և ԱՊԶ-ների շինթույլտվության արժեքի վերանայում
- Քաղաքապետարանի տնօրինության տակ գտնվող գույքի և պետական այլ հանրային վայրերի պետականացում և անթերի բարեկարգում (զբոսայգիներ, գետնանցումներ, Վերնիսաժ, ինչպես նաև հանրային մի շարք այլ առևտրային վայրեր)
- Վթարային շենքերի վերացում՝ նորակառույցներում բնակիչներին բնակարան հատկացնելու պայմանով
- Նորակառույցների լիցենզավորման ժամանակ 4-ից 5 բնակարանի տրամադրում սոց աջակցության նպատակով
- Բազմաբնակարան շենքերի կառուցման թույտվությունը հաստատելիս անպայման հաշվի առնել բնակիչների երեխաների՝ իրենց բնակավայրին մոտ սովորելու կենսական իրավունքը և թողնել տարածք պետական դպրոց կառուցելու համար
- Գերեզմանատների վերահսկում և բարելավում հավասարության կարգով
- Ոչ մի արտոնություն պաշտոնյաներին

9. Էլեկտրաէներգիա և ջրամատակարարում

- Ջրի բնական կորստի վերացում՝ մինիմիզացնելով մինչև 5%
- Էլեկտրական հովհարային և ջրամատակարարման անջատումների վերացում
- Արևային էներգիայի օգտագործման խթանում
- Կոյուղաջրերի խողովակների մաշվածության վերացում

10.Ֆինանսական վերահսկողություն

- Ֆինանսական վերահսկողության համակարգի վերանայում, օպտիմիզացում
- Ծառայողական մեքենաների թվի կրճատում և արժեքային համակարգի սահմանում
- Անիմաստ պաշտոնների կրճատում
- Պետական պաշտոնյաների գործուղումների խիստ ֆինանսական վերահսկում